ԼԱ

ՔՈԶԻԲԱՅԻ ՎԱՆՔԸ ԵՒ ԱՆՈՐ ՀԱՅ ՄԻԱԲԱՆՆԵՐԸ

---

1. Ո՞ւր կը գտնուի Քոզիբայի (Coziva) վանքը.

Ռուսաստանի Դանիէլ կրօնաւորին Ուղեգրութեան համաձայն, Երուսաղէմէն մինչև Յորդանան քսան և վեց վերստ է. իսկ մինչև Քոզիբա՝ տասն և հինգ վերստ. ան կը գտնուի խորունկ հեղեղատի մը մօտ, ճանապարհին ձախ կողմը։ Քոզիբայէն մինչև Երիքով հինգ վերստ է, և Երիքովէն մինչև Յորդանան՝ վեց վերստ։ Հեղեղատը կը թաւալի սեպագեալ ժայռերէ կազմուած մթաստուեր ձորի մը մէջ։ Այդ ժայռերու մէջ քարայրներ կան, ուր երբեմն կը բնակէին անապատականներ, որոնք հաստատած են հոն վանք մը, զոր Յոյներ կ'անուանեն Քոզիբա։ Այս վանքը անդունդի մը վրայ զոգցեալ ծիծեռնակի բոյնի մը նման կառչած է լերան կողքին։

2. Ի՞նչ անունով կառուցուած է Քոզիբայի վանքը եւ ի՞նչ է ծագումը.

Քոզիբայի վանքը սխալ սովորութեամբ մը՝ իններորդ դարուն Ս. Աստուածածնի, և յետին ժամանակներու մէջ, Ս. Գէորգի անունով կ'անուանակոչեն. վանքին արաբական անունն է Տեյր էլ Քէղդ։ Վանքին մէջ, հին դարերէն սկսեալ, պատերուն վրայ գոյութիւն ունեցող Ս. Կուսի հօր Ս. Յովակիմայ պատկերները կը վկայեն թէ վանքը կառուցուած է անոր անունով։ Յակոբոս Առաքելոյն անվաւերական համարուած աւետարանին մէջ կը կարդանք թէ Ս. Կուսի հօր՝ Յովակիմայ անպտղութեան և մօր՝ Աննայի ամլութեան պատճառաւ սրտաբեկութիւն մը կար Ս. Կուսի ծնողաց տան մէջ։ Յովակիմ, երբ զոհ մատուցանելու